15. ԽԵԼԱՑԻ ԱԽՉԻԿ

Կէղնի, չէղնի մեկ մարթըմ կէղնի։ Ինք ունի յոթ ախչիկ։

Էտ մարթ գլավ կէրթեր քաղաք, առուտուր պիտի էներ։

Մե ախչիկըմ ըսավ՝ ինձի ֆիսթան բեր։ Մեկն ըսավ՝ ինձի փեշ բեր։ Մեկ ըսավ՝ ինձի ֆասըմ բեր։ Մեկ ըսավ՝ ինձի մատանի մի բեր։ Մեկ ըսավ՝ ինձի սահաթի շղթա բեր։

Էտ մարթ երբ օր գնաց քաղաք, քաղաքին մոտը չէրթացղան, մի հ՝ախբրի մի հանդիպավ։ Հ՝ախբրեն մե քիչ ջուր խմավ, ըսավ.—Օ՜խ, ի՜նչ աղեկ ջուրըմ է։ Տեսավ մե մարթըմ էլավ հ՝ախբրեն, ըսավ.—Այ բիձա, ես իմ լսելով դու ախչիկ ունիս, ախչիկ մի պիտի տաս ինձի։

Էտ մարթը զարմացավ, օտքեր գետին կպավ։

Ըսավ.— Կիտաս՝ տուր, չիս տար, քեզ կսպաննիմ, վերջին խոսք։

Մարթը գնաց քաղաք, իրեն մի քիչ հուր ու մուր առավ, դարցավ՝ ետ էկավ։ Երբ գնաց տուն, էնքան տրտում էր, որ խանչալ զարկեն՝ մի կաթ արուն չէր էրթար մոտեն։

Ախչիկներ լէ ավելի լավ ուրախացած են, մեկ-մեկու կըսեն. «Հ՝ինչի՞ մեր հայրը էսօր տրտում է»։

Առավոտուն մեյ մի տեսան էն ջրի միջու մարթն՝ կատուն, բոճին, ուղարկիր էր՝ ախչիկը տանելու համար։

Գացին, ուղղակի նստան խնամաթոռքի վրա։

Ախչիկներ զարմացան ու կայնած մնացին։ Մի՞թե շուն ու կատուն էլ էսպես ուսում ունեն, օր էկան ուղղակի խնամաթոռին նստան։

Մարթը պատասխանեց.— Բոճի, կատու, ինչի՞ եք էկեր։

Ըսեցին.— Մենք էկիր ինք ախչիկ տանելու։

Մարթը ելավ իսկույն ախչիկ տվավ, առան ու գացին։

Ախբրին մեչը տարան իջուցին։ Տարան իրենց աղային հանձնեցին։ Երեք օր մնաց էտ ախչիկ անոթի։ Երեք օրեն հետո մարթ բերեց անկաճ տվավ ախչկան, ըսավ.— Այսօր քու կերած էս անկաճն է։

Ախչիկն առավ անկաճ ձեռք, մարթն ելավ դուրս, ախչիկն ըսեց ու լացեց.— Ես այսօր իրեք օր անոթի իմ, բերեց մի մարթու մը անկաճ տվեց ինձի՝ կեր։

Խոսքը պարպելեն վերջ, անկաճ թաբլեց, ախոռին գոմը ընկավ։

Մարթը դռնեն ներս մտավ, ճվաց, ըսավ.— Անկաճ, հ՚ու՞ր իս։

Անկաճ պանցր ձայնով բոռաց ու ըսավ.— Ես թրքնու մեչն իմ։ Դու չիս հասկցեր իմ խաղրըս ու քու բերած մարթ ի՞նչ պիտի հասկնա իմ խաղրըս։

Նա մարթ իսկույն վազեց, ախչկա բոկը բռնեց ու խեղտեց։

Ախչիկա ծծերը կտրեց ու կախեց։

Մյուս օրըն կատուն ու բոճին ուղարկեց, ըսավ.— Գացեք, մեկել քույրը բերեք։

Կատուն ու բոճին առավոտուն քնեն վիր էլան ու գացին տուն, ըսեցին.— Քու մյուս ախչիկ տուր, տանինք։

Մարթ իրեն վախեցուն, իսկույն ախչիկ տվավ, առան էկան։ Պերեցին էկան հ՚ախբրի մոտ։ Հ՚ախբուրը բացվավ, ընոք մտան ներս։ Մարթ կանչեց.— Բարով էկար, կատու, բոճի։

Կատուն, բոճին ըսեցին իրեն.— Աստծու բարին, աղա, բարով վայելես, մենք նոր կնիկըմ քեզ բերեցինք։

— Շնորհակալ իմ ձեր պատվից, կատու, բոճի։

Առավ իրեն կինը ու գնաց իրեն սենյակ։ Կնկան ըսավ.— Անոթի չի՞ս։

Կնիկ ըսավ.— Անոթի չիմ։

Մինչև իրիկուն կնիկ հացին իրես չտեսավ։ Եփ օր իրկուն մարթն էկավ, բերեց անկաճ տվավ կնկան, ըսավ.—Անկաճն առ, կեր։ Առավոտնե դու անոթի իս մնացիր։

Կնիկ անկաճ առավ ձեռքեն, մարթ ըսավ.— Ես կէլլամ դուրս, մե քիչ օլորտիմ։

Մարթ ելավ դուրս։ Կնիկ առավ ձեռքն անկաճ, թաբլեց ախոռին օրթան։ Շատ չրտևեց, մարթ ղրսեն էկավ ներս։

— Այ անկաճ,— ըսավ,— հ՚ու՞ր իս։

Անկաճ պատասխանեց.— Ինչի՞, չիս գիտեր հ՚ուր իմ։ Այս էրկու անգամ է ինձի էնպես մարդու մոտ կուտաք, օր անգութ է։ Ինձ գրցեց թրքներու մեջ։

Անկաճ էտի ըսավ, մարթ իսկույն վազեց, իրեն կնկան բկեն բռնեց, խնդրեց։ Ծծերը կտրեց, տարավ սենյակը կախեց։

Երկրորդ օրըն կատուն, բոճին ուղարկեց.— Գնացեք, մյուս քույր բերեք։

Կատուն, բոճին ըսեցին մարթուն.— Մենք ի՞նչ էրեսով էրթանք։ Էս էրկու հոգու է, սպանման պատճառ էղանք։

Նա ըսավ.— Ոչինչ, գացեք բերեք։

Կատուն, բոճին ելան, ճանապարհ ընկան ու գացին իսկույն խնամթոռի վրա նստան։

Մարթ ըսավ.— Ի՞նչի եք էկի։

Ընոք ըսեցին.— Մենք, չե՞ս գիտեր, ընչի ենք էկիր։

Նա մարթ ելավ, ախչիկ տվավ, առան գացին հ՚ախբրին վրա, հ՚ախբուրը բացվավ, ընոք մտան մեչը։

Կատուն, բոճին տարան և հանցնեցին իրենց աղային։ Աղան հ՚իրկուն անկաճ բերեց տվավ, ըսավ.— Առ կեր, մկա անոթի յիս։

Ախչիկն առավ անկաճըն իրեն ձեռք, մարթ ելավ դուրս։ Ախչիկն ինքն իրեն ըսավ՝ ես մարթի անկաճն ուտո՞ղ իմ, հաճեր օր բերեց անկաճ, տվեց իմ ձեռքս։

Ախչիկն լավրմ բարկացավ ու անկաճ թաբլեց, գնաց ընկավ գոմի մեչտեզ։ Մշակներ ավլեցին գոմի տակ ու լեցին թրքնոց, անկաճ հետ միասին։ Մարթը դրսեն էկավ ու ճվաց.— Այ անկաճ, ի՞նչ տեխ իս։

Ըսավ.— Չե՞ս գիտեր ո՞րտեխ իմ։ Էնպիսի կեղծավորներ կբերես, որ մինչև անգամ իս թաբլեցին թրքնոցի մեչտեզ։

Մարթն վազեց իսկույն, կնկա բկեն բռնեց, խեղդեց. ծծերը կտրեց տարավ սենյակ կախեց։

Էկավ մյուս ախչիկ, ընորն էլ անկաճ տվավ.—Առ, անկաճ կեր։

Ախչիկն առավ անկաճ ձեռք, մարթ թողեց դուրս ընաց։ Ախչիկն ինքն իրեն ըսավ. «Աստված, դու աղատիս, աս ի՞նչ փորձանք էր մեք մտաք մեչ։ Հացի տեխ մարթին անկաճ տվավ, անկաճ ուտելու բա՞ն է։» Բռնեց թաբլեց, մարթը տրսեն էկավ ներս.— Ա՛յ անկաճ,— ըսավ,— ո՞ր-տեխ իս։

— Ինչի՞, դու չիս գիտնա իս որտեխ իմ, ինձի էնպես լիրբերու ձեռքը կիտաս, որ ինձ կգցին ձիաներու օտքին տակ։

Երփ մարթն անկաճի ձայն իմացավ, իսկույն կնկա բոկը բռնեց, խեղդեց, ծծեր կտրեց, տարավ կախեց։

Բոլոր վեց ախչիկն ալ այս անկաճի խոսքին համար, ծծերը կտրեց, իրենց լե խեղդեց։

Էկավ յոթերորդ պզտիկ ախչկան վրա։ Կատուն, բոճին ուղարկեց

աղչկան մոտ։ Առավոտուն լույսը բացվավ, կատուն. բոճին հասան մարդու տուն։

Ըսավ.— Պզտի աղչիկդ ի տուր, տանենք։

Ըսավ.—Վեց աղչիկսի տարաք, ի՞նչ էրիցիք օր պզտիկսի կտանեք։

Կատուն, բոճին պատասխանեցին.— Մեր աղաներ յոթ աղբեր ին, ամեկուն մեկ կտանինք։

Էտ մարթ համոզվավ էտուց խոսքին, իրեն աղչիկը տվավ, առան էկան։ Հ'աղբրին վրեն կայնան, հ'աղբուր իսկույն բացվավ, իրենք մեջը մտան։ Աղչիկը մեկ կողմե զարմացավ, մեկ կողմե մտածմունքի մեջ ընկավ։ Տարան մարդուն հանձնեցին։

— Ահա, այս է, բերեցինք քու վերջի կինը. որ բարի է, աստված էն կատարե։

Կատուն-բոճին դուրս ելլալուց հետո, մարդը իսկույն դոլաբի դուռը բացեց, անկաճ հանեց, տվավ կնկան։ Ըսավ.— Այս անկաճ պիտի ուտիս։

Ինքը դռնեն դուրս էկավ։ Աղչիկն ըսավ. «Անպայման այս անկաճ իմ քուրերու գլուխն է կերիր»։ Աղչիկը անկաճ առավ, գրավ քարի վրան, լավ մի ծեծեց, մի քիչ աղ ցանեց վրան ու դրեց իրեն ծոցի մեջ, պահեց։

Մարթն դռնեն ներս մտավ.—Այ անկաճ,—ըսավ,—ի՞նչ տեղ իս։

Անկաճ պատասխանեց.— Էնպես աղվոր տաք տեղ մ' իմ օր։

Մարթը սիրեց իրեն կնկան ու հասավ պագ մը առավ։ Մարթ ըսավ.— Այ կին, հ'էսօր քունս կիգա։

— Գլոխդ ի տիր ծնկանս ու քնիր։

Մարթը գլոխը տրեց իրեն կնկան ծնկան ու անուշ քնավ։ Կնիկն իրեն մարթու չանան մե քիչ շրփեց, ըսավ.— Ինչ խորոտիկ մազեր մ' են։

Տեսավ օխտ բալնիք էլավ։ Վերուց բալնիստան, տրեց իրեն գոտին։

Մարթ զարթավ, ելավ գնաց իրեն նեճիր։ Կնիկ ելավ, բալնիստան առավ, բացեց մի դուռ մը, օր վեց կնիկ-մարդու ծիծ է կախված։ Ըսավ. կա չկա ասի իմ քուրերու ծծերն ին։

Նա դուռը գոցեց, երկրորդ սենյակի դուռը բացեց, տեսավ որ մի սենյակ մի օցեր ու ձկներ, բոլոր բանտարկյալ են։—Վա՜յ,—ըսավ,— էս ինչ անխիղճ, անաստված մարթ է։

Նա դուռ գոցեց, չորրորդ դուռ բացեց, տեսավ ամբողջը սարերու գայլեր ու աղվեսներ լեցված են մեջ։ «Աս մեղք անասուններ ի՞նչ էրած ին, օր լեզու ալ չունին խոսան, օր բանտարկյալ էրիր է»։

Նա դուռը փակեց, հինգերորդ դուռը բացեց։ Զանազան կերպով թռչուններ լեցված մեջ։ «Աս անլեզու թռչուններ հավքիր է, ըսոնց մեխքեն ե՞րբ կուշտ պիտի ուտե»։

Նա կոպղեց, վեցերորթ սենյակ բացեց, օր ամեն տեսակ մալ ու

զումշներ լեցված են։ «Եթե օր սա մարթը խելառ չէղներ, աս խեղճ մալիրը չէր հավքեր աստեղ»։

Կոպղեց նա դուռը, յոթերորդ դուռը բացեց։ Մեյ մե նայեց սենյակի մեչ, մի մարթ մի բանտարկյալ էղված, ինքը սան հետ կապված, ճրագը գլխու վերև կվառվի։

Ըսավ.— Այ եխբայր, տու ի՞նչ մեխք իս էրիր։

Ըսավ—Այ բույրիկ, ես ի՞նչ գիտեմ, ես Ջանպոլատ իմ։ Ամեն էրկաթեղեն ըղբեստներ կշինիմ։ Որ ամեն մարթը հաղթեցի աշխարքիս էրես, սրան չկարողացա հաղթել, կխնթրեմ օր իս արցակես այս տեխեն։

Ախչիկն սկսավ էտ մարթուն արցակել։

Մարթ ըսավ.—Ես քեզի մի սանդուխըմ կշինեմ, օր մեզի ինչքան բանտարկյալ կա, արցակիս, էտ անաստվածի ձեռքեն աղատվիք։

Ախչիկ ըսավ.— Ես ինչպես աղատվիմ օր ձեզ ազատիմ։

Մարթ ըսավ ախչկան.— Ես օր քեզի մեկ սանդուխըմ պիտի շինիմ, գրեխ վրա պիտի քաշիմ, ոչ գընդակ կբանի, ոչ կկոտրի։ Դու քեզի հաց ու ջուր կառնիս քովըդ, կարցակիս բոլոր բրոնավորներ ու կէրթաս կնըստիս քու սանդուխի մեչ ու կոպղիս վրադ քու դուռըդ։ Քու մարթըտ կիգա, կտեսնա բանտարկյալներ բոլոր արցակված են, էնպես կրակ կընգնա գլոխ, սենյակներու շատ փայ պիտի քանդե։ Ոչ մի մարթ չի հանդիպիր իրեն, մինակ քու սանդուխ ի։ Ներսեն իրեք անգամ կզարկե գետին սանդուխ։ Սանդուխ չկոտրելեն վերչ, ինք խելագար կտառնա։

Էտ խոսքերն օր ըսավ, սիրով ընդունեց էտ ախչիկ, մարթուն իսկույն արցակեց։ Արցակելեն սորա, սկսեց սանդուխ շինել, իրեն խոսքը պիտի կատարե։ Երի սանդուխ շինեց.— Կնիկ,— ըսավ,— շինեցի փրծա։

Կնիկ էկավ, սանդուխի դուռ բացեց, բավական շնորհակալ էղավ մարդումնե։ Իսկույն գնաց, սենյակներու դուռ բացեց, ամեն աշխարիս թրուչուններ օր բռնած էր, արցակեց, էկավ նստավ սանդուխի մեչ ու սանդրխ վրեն կոպղեց։ Էրկու օրեն հետո ախչկա մարթ էկավ, երի տեսավ սենյակներ պարապ, բան չկա մեչ, կրակ ընկավ իրեն գլոխ։

Բոլոր սենյակներ քարուքանդ էրեց։ Ոչ մի մարթ չտեսավ։ Էկավ սանդուխ տեսավ, էնքան բարկացավ, իրեք անգամ սանդուխ բանցրցուց, զարկեց դետին։ Բայց սանդուխ չկոտրավ։

Ինք խելագար դարցավ։ Իսկույն առավ սանդուխ, տարավ ծովը գցեց։ Հերսեմեն էկավ տուն, ընկավ վար, մեռավ։

Էտ սանդուխն ջրին երեսին գնաց, չէր գիտեր քանի ժամանակ գնաց։ Աշխարքիս էրես պատմություն մ' եղավ։ Բիրդան մի ձկնորսի թոռի մեչ մտավ էս սանդուխ։ Ձկնորսը բանցր ձայնով ճվաց ու ընկերտանուն կանչեց, ընկերներ վազեցին.— Եխբար, ի՞նչ կա։

— Ձեմ գիտեր մե բարմ կա, ինկեր է թոռի մեչ։ Ձեմ կարողանա

բանցրցուցե։ Օգնեցեք։ Հաճեր ի՞նչ պիտի ըլլա, աղքան ծանդրութեն ունի։

Երի չորս-հինգ հոգով հանեցին թոռ ջրեն, տեսան մի սանդուխ ունի մեջը։

Մեկ ըսավ.— Ջկերն ալ բաժնիք ու սանդուխն ալ բաժնիք։

Բայց ձկան հանող ըսավ.—Ոչ, սանդուխ կիտաք մի մարդու բաժին։

Ջուկ հանողը սանդուխ վերցուց իրեն բաժին։ Ուղարկեց իրեն մորը քով։ Մայրը ամեն օր առավոտուն կէլլար, իրեն յաթախը շհավաքել, աչքը դուրս էր, կէրթար, իրիկուն նորեն կիգար։ Տասն օր էտպես անցավ։ Մի ավուր մեկ ախչիկ դուռ բացեց, նայեց, պառավն գացեր է, յաթախբան մնացեր է տեխը։

Ելավ, յաթախն հավաքեց, տունը մաքրեց, կերակուրը սկսեց էփել։ Իրեն բաժին լցեց, կերավ։ Մյուս տրեց թունրան վրան, էկավ մտավ սանդուխ։

Իրիկուն պառավ էկավ տուն, տեսավ իրեն ամեն բան պատրաստ է ու յաթախն ալ հավաքած։ Զարմացավ էտտեխ։ Ըսավ.— Ոչինչ, կարելի է առավոտ ես եմ արել, մտքես չի անցնիր։

Իրեն հաց կերավ ու յաթախ ձգեց, պառկավ։ Առավոտուն էլավ, գնաց։ Դենա էլավ ան օր, յաթախ վերցրեց, կերակուր պատրաստեց։

Իրիկունը պառավ էկավ տուն, տեսավ օր ամեն բան պատրաստ է։ Էնքան բարկացավ, ոչ տրացի թողեց, էլավ դուրս, ոչ բարեկամ, ոչ ազգական, բոլորին խայտառակ էրեց։— Վի՞ր մեկտ ի մտիր իք իմ տուն, ըս կերակուր պատրաստիր եք։

Մե մարթըմ ըսավ.— Այ պառավ, մեզ խայտառակ էնելուն, դու խայտառակ էղիր։ Առավոտուն սպասե քու տուն, գաղտնիք լավ իմացիր, տես ո՞վ էր, օր մեր յախան քեզանից ազատվի։

Պառավ ընոր խոսքերուն մտիկ էրեց։ Մյուս առավոտ փաթվավ խսիլ, կայնավ դռան հ՝ետև։ Մեյ մի տեսավ սանդուխ բացվավ, մե ախչիկ մ՝ի դուրս էկավ։ Ամեն բաներ էրեց, կերակուր պատրաստեց, իրեն բաժին լցեց, կերավ, էկավ սանդուխի դուռ բացեց, պիտի մտներ ներս, պառավ կսկիծ մազեր ետևանց բռնեց ու ախչիկ չթողեց մտավ սանդուխին մեջ։

— Դու ինձի հարս պիտի ըլլաս։

Երկրորդ օր նամակ գրեց, ղրկեց իր մանչուն։ Մանչը առավ նամակ, բացեց։ Երի օր կարդաց նամակն, գրած էր օր դու սանդուխ չես բերեր, դու բոզ ախչիկ իս բերիր։

Մանչը էտի կարդաց լմընցավ, ընկերներուն ըսավ.— Ես այսօր պիտի էրթամ տուն։

Ելավ, ուղղակի էկավ տուն։ Մորը մոտեն հարցուց, ըսավ.— Հ՝ու՞ր է հարսըտ։

Մայրը պատասխանեց.— Գնա,— ասավ,— գնա, քու բոզին քովը. գնա, դու ալ ինձի չպիտի էղնիս տղա։

Տղեն ախչիկ տեսնալուն պես, խանչալ քաշեց ու հասավ ախչկան, վիրավորեց ու ձգեց պատեն վար։ Մե աղքատի մեկի բակին մեջ մտավ։ Իրիկուն էլավ օտաց ճանապարհին դուրս, ինքը ծերացեր էր, բիրդան քիթ ու բերնին իշավ մե խսլի փաթթոցի վրա։ Ծերունին վերցուց էտ փաթթոց խսիլ, տարավ տուն։ Իրեն ախչիկներ ուրախացան, խսլի մոտ էկան։ Խսիլ բացին, մի վիրավոր ախչիկ մեջը տեսան։ Զարմացան ու հեռու փախան։

Իրենց հոր ըսեցին.— Աս ի՞նչ է, աս ի՞նչ պատճառ է։

Հայրն ըսավ.— Աստված ինչ օր գրիր է, պիտի տեսնաք։

Մայրն ըսավ.— Ծոթն ախչիկ ունիմ, ես՝ ութ, տուն էլ՝ ին, էտ ախչիկն ալ՝ տաս։ Պայինք, տեսնանք ի՞նչ կիլլա։

Բոլոր սիրտով, միասին ընդունեցին։ Իսկույն դոքթոր բերեցին, ախչկա վերքը կապեցին, քույրեր իրարու հետ ուրախութեն էրեցին՝ մենք էղանք ութ քուր։

Երբ ախչիկ առողջացավ, իրեն ախչիկներ ամուսնացուց, ախչկան ըսավ.— Այ զավակս, գնա, տուն ալ ամուսնացի։

Ախչիկը մնաս բարով էրավ ու ճանապարհի հետ գնաց։ Շատ երկար չտևեց։ Քուրդըմ հանդիպավ ախչկան։ Քշեց ձին դեպի ախչիկ։ Ախչկա վերեն կասկածելի այ մի թափեցուց, ըսավ.— Դու ընձի թե չառնուս, քեզի պիտի ըսպանիմ։

Ախչիկն իրեն հույսը կտրեց, ըսավ.— Քեզի պիտի առնիմ։ Էն պայմանով ես քեզի կառնիմ, օր դու էրթաս, լողանաս, գաս։ Ձին ու հագուստ հանե, տիր այստեղ, գնա, լողացիր, արի, ես քումն իմ։

Երբ ձին ու հագուստ հանեց վրավեն, գնաց գետը մտավ, սկսեց լողանալ, ախչիկ թեզըմ շորեր հագավ ու հեծավ ձին, քշեց։ Մարդուն ըսավ.— Ես գացի, թե կուզիս, կնկա հագուստներ մնաց, դու հագի։

Ու քշեց ձին, շատ երկար չտևեց, օտար էրկրի մը մեջ մտավ։ Էտ օտար էրկրի թագավորը մեռիր էր։ Իշխաններ հավաքեցին մեկ մեկուն։

Նա ըսավ. դու էղիր թագավոր։ Նա ըսավ. դու էղիր թագավոր։

Մյուսներ ըսեցին.— Մենք էնպես մարթ պիտի էնինք թագավոր, բոլորովին օտար էրկրի մարթ։ Իշխանի մեկ ըսավ.— Ես մարթ մ՝ իմ տեսիր, բոլորովին օտար երկրէ։ Նա արժանի է էղնի մեր թագավոր օր կառավարե մեր էրկիր։

Բոլոր միասին ընդունեցին սիրով էտոր։ Կանչին, բերեցին ժողովքի մեջ։ Էրեցին թագավոր, ընդհանուր էրկրի կառավարիչ։

Նա իրեն պալատի դուռ շինեց մե հ՝ախբուր, իրեն նկարը քաշեց

10—915

վրան, մե ջանդարմա էս կողմ կանգցուց, մե՝ մյուս կողմ։ Ով օր ջուր խմե, ախ էնե, նա բանտարկյալ պիտի էղնի, էրթա թագավորի մոտ։

Ժամանակրմ անցավ։ Իրեն մարթն օր սանդուխ ջրեն հաներ էր, ատ մարթ, ատ ծերունին օր իրեն լավացուցեր էր, միասին էկան քաղաքի մեչ։

Օտար էրկրի քաղաք էր, չեն գիտեր հ՝ուր էրթան։

Էկան պալատի դուռ կայնան, էրկուս միասին գացին հ՝ախբուր, ջուր խմեցին։ Տղան լա շատ նայեց ու ծերունին լա շատ նայեց, էրկուսն ալ սրտեն ախ էրին ու պիտի անցնեն։ Իսկույն ջանդարմներ բանտարկյալ էրեցին ու առան տարան թագավորի մոտ։

Թագավորը հարցուց.— Այ ծերունի,— ըսավ,— իմ պալատի հ՝ախբրրի ջուրը խմեցիր, ինչի՞ ախ քաշեցիր ու հ՝ընցար։

Ծերունին ըսավ.— Շատ առաջ էսպես մի ախչիկ պատահավ, ես լավացուցի, անուր նկար կնմանի։

Ըսավ.— Վերուցեք էս ծերունին, տարեք մի սենյակ, թող մնա ըտտեղ։

— Այ մարթ,— ըսավ,— դու ի՞նչի համար ջուր խմեցիր, ախ քաշեցիր։

— Նա էր պատճառն օր նկարի տեր իմ տունս էր և ես ուրիշին խաբվեցա, նրան զարկի ու պատեն վար քցի. պաճառ էն էր, ախ քաշեցի։

Թագավոր հրամայեց, իսկույն էրկուսին վերուցին, տարին բաղնիք և լավ ըզքեստ էլ հագուցին, բաղնիցմե բերեցին, նորեն թագավորը ժողովքին մեչ հայտնեց, թե իր մարթն է, ինքը կին է։ Էրիկ լղավ թագավոր, ինք լա թագուհի։

Հասան իրանց մուրադին, դու լա՝ քումն։